



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 236 - Ա

15 օգոստոսի 2017 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ - 728 հրամանագրի 1.6 -րդ կետի դրույթներով՝

կարգադրում եմ՝

1. Հայ առաքելական եկեղեցու թեմերից ներկայացված ցանկում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզից ընդգրկված սրբավայրերն իրենց սպասարկման և պահպանության համար անհրաժեշտ տարածքներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հանձնելու գործընթացն իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

- Հարությունյան Վանիկ - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, հանձնաժողովի նախագահ
- Բուդումյան Խաչատուր - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ
- Չարվադարյան Գեղամ - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ
- Ղուրջուդյան Մարատ - մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչի տեղակալ


Հանձնաժողովի կազմում ընդգրկել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համապատասխան համայնքների ղեկավարներին և Հայ առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի համապատասխան տարածքների ներկայացուցիչներին:

2. Հանձնաժողովին՝ մեկամսյա ժամկետում ավարտել Հայ առաքելական եկեղեցու թեմերից ներկայացված ցանկում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզից ընդգրկված սրբավայրերն իրենց սպասարկման և պահպանության համար անհրաժեշտ տարածքներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հանձնելու գործընթացը և տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալի և նրա տեղակալի կազմակերպության:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունվելու պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝



ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ